Դէտապետէն — Դէտապետք հրամայեցէք ամենայն ծննդոց բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայաստանեայց թէ արու և թէ էգ ուսանիցեն արհեստին ընթեռնուլ տառս և բառս և խօսիլ բառբառս Հայոց։

Հայրք — Հայրք՝ որդոց Հայոց մուծէք որդիս ձեր անխափան 'ի ընթերցումունս հայերէն և ապա կրթեսցուք 'ի զէնս արհեստ զինուորութեան և ուսուցէք նոցայ հնազանդիլ Օրինաց։

Տիկինք — Տիկինք՝ հաւանեցուսցէք սիրտս ձեր և սիրտ դստերաց ձերոց ամուսնացուցանել դստերս ձեր ընդ արանց քաջաց և յաղթօղ զինուորաց, և ամօթալից արարէք արանց ձերոց եթէ մտցեն նոքայ 'ի գործս ծառայութեան այլ ազգաց։

Այսքան Օգնութիւն 'ի ձէնջ եղելով բաւական լիցի պատճառ լինելոյ փայլու�ազգին Հայոց երջանկութեամբ 'ի յերեսս հայաստանեայց յաշխարհի, յայնժամ լինիցի խրախճանութիւն մէջ Հայոց տեսանելով ճարտասանք ոսկէ բերանք է քաջադանդուրք ախոյեանք և տիրուհիք դերա-